# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«16» ապրիլի 2014 թվականի N: 77-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԱՌՎԱԾ 9 ԵՎ ԱՎԵԼԻ ԵՐԵԽԱ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.12-րդ կետի <<բ>> ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 19-ի N 363-Ն որոշման N 13 հավելվածի 4.1-րդ կետի պահանջը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 19-ի N 363-Ն որոշմամբ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ կապիտալ դրամաշնորհներ>> հոդվածով) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների կողմից հաշվառված 9 և ավելի երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով, որպես պետական աջակցություն, տրամադրված 83.580.0 հազար դրամ գումարը բաշխել բազմազավակ թվով 7 ընտանիքներին՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյանին՝ ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի և անհատույց պետական ֆինանսական աջակցությունը ստացող քաղաքացիների միջև կնքվող աջակցության տրամադրման մասին պայմանագրերի նախագծերը, պայմանագրերում սահմանելով, որ աջակցությունը տրամադրվում է շուկայից պատրաստի բնակելի տուն (բնակարան) ձեռք բերելու համար:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված

ՀՀ Շիրակի մարզպետի

2014 թվականի ապրիլի 16-ի

N 77-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ

/հազար դրամ/

| N | Ա.Ա.Հ | Ընտանիքի անձերի քանակը | | Տրամադրվող աջակցության գումարը |
|---|---|---|---|---|
| | | Ընդամենը | Որից երեխաներ | |
| 1 | Գևորգյան Արտյոմ | 15 | 13 | 12930.0 |
| 2 | Ալեքսանյան Արևհատ | 14 | 9 | 12930.0 |
| 3 | Մովսիսյան Հասմիկ | 12 | 10 | 12930.0 |
| 4 | Դիլանյան Հովհաննես | 15 | 11 | 12930.0 |
| 5 | Խաչատրյան Լիլիթ | 13 | 9 | 12930.0 |
| 6 | Պետրոսյան Աննա | 13 | 10 | 12930.0 |
| 7 | Թումոյան Սամվել | 15 | 12 | 6000.0 |
| | ***Ընդամենը*** | | | ***83580.0*** |

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ.ՊՈՂՈՍՅԱՆ